ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (3.1-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1.ՀՀ Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (3.1-1)

Առաջատար մասնագետը՝

ա)կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին պատշաճ, որակով.

բ)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը.

գ)հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականներին, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքի մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

դ)Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը.

ե)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը.

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

ա)միջնակարգ կրթություն

բ)ՀՀ սահմանադրության Համայնքային ծառայության մասին Տեղական ինքնակառավարման մասին Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

գ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության

դ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա մարտի 11-ին ժամը 16:00–ին Պտղունքի գյուղապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարան՝ հեռ.(0231)6-35-50 և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն(հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71) հեռ. (0237) 6-07-70:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013 թ.-ի մարտի 1-ին